ՍԴ1/0137/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 դեկտեմբերի 2023 թվական քՔ.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 24-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Դավիթ Միհերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով թիվ 90158222 (ՍԴ1/0137/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի նոյեմբերի 2-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 3-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի նոյեմբերի 27-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ Դ.Համբարձումյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 99097 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի հետախուզական դասակի հրամանատարի տեղակալ, 2022 թվականի սեպտեմբերի 09-ից նշանակված լինելով մարտական հերթապահության ՀՀ Սյունիքի մարզի հարավ-արևելքում գտնվող Ներքին Հանդ գյուղի մոտակայքում տեղակայված, ՀՀ ՊՆ 99097 զորամասի պահպանությանը հանձնված թիվ 106-րդ մարտական դիրքում՝ որպես դիրքի ավագ, խախտել է ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքով և ՀՀ պաշտպանության նախարարի 12.05.2017թ. թիվ 080 հրամանով սահմանված մարտական հերթապահություն կրելու կանոնները, չի դիմակայել պետության դեմ 2022 թվականի սեպտեմբերի 13-ից՝ ժամը 00:05-ից, հակառակորդի ուժերի կողմից իրականացված հարձակմանը, պատշաճ կերպով չի իրականացրել իր անձնակազմի ղեկավարումը և թողնելով մարտական դիրքը՝ նահանջել է Սրաշեն գյուղի մոտակայքում տեղակայված՝ գումարտակի հրամանատարական կետ, որը հանգեցրել է մարտական*

հերթապահության և մարտական ծառայության կրման բնականոն ընթացքի խաթարմանը (…)»[1]*:*

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ն/ախնական դատաքննությունների ընթացքում վարույթի ընդդատության հարցի քննարկման ժամանակ մեղադրյալի պաշտպան Վարդան Համբարձումյանը միջնորդել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ փոխել վարույթի ընդդատությունը, նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունն այլ դատարանի տարածքից են:*

Հանրային մեղադրող Սերգեյ Խաչատրյանը ներկայացված միջնորդության դեմ առարկություն չի ներկայացրել և համաձայնել է պաշտպանի դիրքորոշման հետ:

Թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթով մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի համաձայն՝ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանը Գեղարքունիքի մարզից է, վկաներ Հայկ Հարությունյանը՝ Վայոց Ձորի մարզից, Ռուբեն Պետրոսյանը՝ Երևան քաղաքից, Ենոք Տոնոյանը՝ Շիրակի մարզից, Յաշա Ասիրյանը՝ Տավուշի մարզից, Կարեն Մելքոնյանը՝ Կոտայքի մարզից, Կարեն Շահինյանը՝ Արարատի մարզից, Էդուարդ Հախվերդյանը՝ Տավուշի մարզից, Գառնիկ Մկրտչյանը՝ Արագածոտնի մարզից և Վլադիմիր Շարբաթյանը՝ Սյունիքի մարզից:

Վարույթի մասնավոր մասնակից՝ պաշտպան Վարդան Համբարձումյանը նախնական դատաքննությունների ընթացքում ներկայացրել է իր անձնագրի պատճենը և հայտնել է, որ բնակվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում:

(…)

Տվյալ դեպքում թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են այլ դատարանի տարածքում:

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 129-131:

Նկատի ունենալով, որ վարույթի բոլոր մասնավոր մասնակիցները՝ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանը և պաշտպան Վարդան Համբարձումյանը բնակվում են Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, ինչպես նաև վերջիններս միջնորդել են, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[2]:

7. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ա]նդրադառնալով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելու հարցին դատարանը արձանագրում է, որ այն դեպքում երբ, Գեղարքունիքի մարզի դատական տարածքում բնակվում է վարույթի երկու մասնավոր մասնակից, Տավուշի մարզի դատական տարածքում բնակվում է երկու վկա, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում ևս բնակվում է երկու վկա, իսկ մնացած անձիք մեկական սկզբունքով բնակվում են տարբեր մարզերի դատական տարածքներում, ակնհայտորեն առկա չէ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելու պարտադիր պայմանը, հետևաբար, դատարանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 4-րդ մասով, փաստում է, որ համաձայն չէ թիվ ՍԴ1/0137/01/23 (90158222) քրեական վարույթի տարածքային ընդդատությանը, առկա է ընդդատության մասին վեճ և վեճը լուծելու համար քրեական գործը պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին: (…)»*[3]:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 31-33:
[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 42-46:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»*:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպան Վարդան Համբարձումյանը նախնական դատալսումների ժամանակ միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[5]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցները բնակվում են Գեղարքունիքի մարզի տարածքում՝ որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին այն հիմնավորմամբ, որ

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, դատական նիստի արձանագրություն, թերթ 30:

վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են այլ դատարանի դատական տարածքում[6]:

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրելով, որ վարույթի մասնավոր մասնակիցներից միայն երկուսն են բնակվում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում՝ գտել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առկա չէ[7]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու պարտադիր պայման նախատեսում է ոչ թե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության **տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,** այլ **առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում** բնակվելը:

Մինչդեռ սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Վ.Համբարձումյանի[8] և մեղադրյալ Դ.Համբարձումյանի հաշվառման և բնակության վայր նշված է Գեղարքունիքի մարզը, վկաներ՝ Հ.Հարությունյանի հաշվառման և բնակության վայր՝ Վայոց ձորի մարզը, Ռ.Պետրոսյանի հաշվառման և բնակության վայր՝ քաղաք Երևանը, Ե.Տոնոյանի հաշվառման և բնակության վայր՝ Շիրակի մարզը, Յ.Ասիրյանի և Է.Հախվերդյանի հաշվառման և բնակության վայր՝ Տավուշի մարզը, Կ.Մելքոնյանի հաշվառման և բնակության վայր՝ Կոտայքի մարզը, Կ.Շահինյանի հաշվառման և բնակության վայր՝ Արարատի մարզը, Գ.Մկրտչյանի հաշվառման և բնակության վայր՝ Արագածոտնի մարզը, Վ.Շարբաթյանի

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթ 26:

հաշվառման և բնակության վայր՝ Սյունիքի մարզը[9]: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն **վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը** բնակվում է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում գտնում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

15. Ամփոփելով՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Դավիթ Միերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով թիվ ՍԴ1/0137/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 188-189: